

**His Holiness Karekin II's address
to the President of the United States in Washington, DC**

Mr. President,

I am deeply moved by your cordial reception and thankful for the time you have given us from your busy schedule.

I have come from Biblical Armenia, the land where Noah's Ark rested and thus became the second birthplace of mankind. During the course of their history, the Armenian people have witnessed many adversities and survived through the Genocide of 1915 and the seventy years of atheism under Soviet rule. Today, all of the efforts of our people, who have regained their independence, are concentrated on restoring what had been desecrated and ravaged. Let me say that it is not easy to heal the wounds that atheism aggressively inflicted on the human soul and on our public life. But, I am optimistic, since the 1700th anniversary of the proclamation of Christianity as the state religion of Armenia has infused the Armenian people with a spirit of renewal and revival of faith.


Mr. President, on this occasion I wish to express my gratitude to you and to the government and the people of the United States of America for providing multi-faceted assistance to Armenia--presently building her new and free life--to overcome the consequences of the earthquake of 1988 and the economic hardships. From the time right after the earthquake, I recall with deep emotion the tearful gaze of a young American visitor, namely George Bush Junior, in whom the Armenian people witnessed the epitome of American philanthropy. Our people always remember that at the beginning of the twentieth century the United States was among the first to extend a helping hand to the massacred Armenians and to provide under its roof a haven for thousands of Armenian refugees. Their descendants are now the faithful and respected citizens of this country, who through their input in public life are expressing their fathers' and grandfathers' gratitude to America.

Our people greatly appreciate United States' peaceful efforts in particular to resolve the problem of Mountainous Karabagh. We pray that the God-given inalienable right to live freely, as well as justice and truth would prevail. May the greatly tormented and heroic Armenians of Karabagh find their peaceful life on their ancestral soil, in a brotherly

good-will and in close cooperation with the neighboring peoples of the region.

From the 1700 years old luminous Altar of the Mother See of Holy Etchmiadzin, we ask for you the blessings of God in the Highest to help you in your important mission on behalf of a continuously peaceful, secure and prosperous life in the United States. Amen.

**ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՉՄԻԱԾԻՆ**



**SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN**

**Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝
ԱՍՆ-Ի ՆԱԽԱԳԱՅԻՆ ՈՒՂՂՅԱԼ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԿԵՇԻՆԳՏՈՆՈՒՄ**

Մեծարգո Նախագահ

Խորապես զգացված եմ և շնորհակալ Ձեր թանկ ժամանակի տրամադրման և սիրալիք ընդունելության համար: Գոհությամբ եմք վերառաքում մեր Երկնավոր Հորը, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-րդ տարում առաջնորդեց ինձ Հոփվապետական առաջին այցը կատարելու Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց թեմեր:

Այս օրհնյալ հողից դեպի երկինք բարձրացող բոլոր հայկական եկեղեցիներում, ուր որ այցելեցի և պիտի այցելեմ, շարունակ հայցելու եմ Բարձրյալի օրհնությունը Ամերիկայի հզոր տերության և իր Նախագահի, Ձեր հյուրընկալ և օրհնասեր ժողովրդի համար, որին ճանաչել եմ անցնող տարիներին նվելի քան 20 նահանգներ, նաև Տեխաս այցելությունների ընթացքին: Հանում աշխարհասփյուռ մեր ժողովրդի կրկին շնորհավորում եմ Ձեզ Ամերիկայի Միացյալ Նահանգաց Նախագահի բարձր պաշտոնում ընտրվելու առիթով:

Ես եկել եմ բիբլիական Հայաստանից, Նոյի տապանակիր երկրից, մարդկության երկրորդ ծննդավայրից: Հայ ժողովուրդը խորհրդային 70-ամյա ժամանակաշրջանից հետո այսօր վերագտել է իր անկախությունը և ջանում է վերակազմակերպել իր հասարակական կյանքը ժողովրդավարության, ազատ տնտեսության, մարդու իրավունքների հարգման և խղճի ազատության օրինահարգ սկզբունքներով:

Բռնատիրության և անաստվածության տասնամյակներին Հայոց Առաքելական եկեղեցին հալածվել ու ճնշվել է անողորմաբար: Բանտարկվել, աքսորվել ու սպանվել են հազարավոր եկեղեցականներ, ավելի քան յոթ հարյուր վանքեր ու եկեղեցիներ ավերվել են ու խոնարհվել: Չի մարել, սակայն, մեր ժողովրդի վստահությունն ու հավատը առ Աստված: Այսօր բոլոր ջանքերն ուղղված են վերականգնելու սրբապղծվածն ու ավերվածը: Խոստովանեմ. դյուրին չէ բուժել մարտնչող աթեիզմի վերքերը մարդկանց հոգիներում և հասարակական մեր կյանքում: Մեծ է Աստված, լավատես եմ և լիահույս, հավատում եմ, որ Տիրոջ օգնականությամբ ազգս հայոց՝ ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս, պիտի կարողանա նախնյաց օրինակով հաղթահարել ներկա դժվարությունները և շարունակել հավատի երթը ի Քրիստոս:

Մեր ժողովուրդը միշտ հիշում է, որ Ամերիկան անցյալ դարասկզբին, 1915 թ. մեծ Տեղասպանության օրերին առաջիններից մեկը ձեռք մեկնեց եղեռնահար հայությանը և իր հարկի ներքո ապաստան տվեց հազարավոր գաղթական հայերի, որոնց ժառանգներն այսօր վստահելի ու հարգարժան քաղաքացիներն են այս երկրի՝ ամերիկյան կյանքում իրենց ներդրումով փոխհատուցելով պապերի ու հայրերի երախտիքը Ամերիկային:

Մեծարգո Նախագահ, այս առիթով հոգու պարտք եմ նկատում մեր ժողովրդի երախտագիտությունը հայտնել Ձեզ, Ամերիկայի Կառավարությանն ու ժողովրդին այն

բազմակողմանի աջակցությանց համար, որ Ամերիկան ցուցաբերել է իր ազատ, նոր կյանքը կառուցող Հայաստանին նաև վերջին շրջանում՝ երկրաշարժի հետևանքները, տնտեսական դժվարությունները հաղթահարելու նպատակով: Ամերիկյան ժողովրդի մարդասիրությունը հայությունը խտացված տեսավ երկրաշարժի օրերին Հայաստան այցելած երիտասարդ ամերիկացու՝ Քուշ Կրտսերի արցունքոտ հայացքում: Մեր ժողովուրդը բարձր է գնահատում հատկապես Ամերիկայի խաղաղարար ջանքերը՝ խաղաղասեր այլ պետությունների ու ժողովուրդների հետ անվրդով ու անվտանգ պահելու Երկիր մուխակը՝ տունը մեր ընդհանուր: Մենք աղոթում ենք, որ ազատ ապրելու Աստվածաշնորհ անօտարելի իրավունքը, արդարությունն ու ճշմարտությունը հաղթանակեն նաև Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման ջանքերում, և Ղարաբաղի բազմաչարչար ու հերոսական հայությունը գտնի իր խաղաղ կյանքը պապենական հողում՝ տարածաշրջանի հարևան ժողովուրդների հետ եղբայրական բարի կամեցողության ու անխաթար համագործակցության մեջ:

Ամենայն հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Լուսե Խորանից Բարձրյալն Աստծո օրհնությունն ու զորակցությունն ենք հայցում Ձեզ Ձեր բարձր առաքելության մեջ՝ հանուն Ամերիկայի Միացյալ Նահանգների հարատև խաղաղ, ապահով ու բարգավաճ կյանքի: Ամեն:

**His Holiness Karekin II's address
to the President of the United States in Washington, DC**

Mr. President,

We are deeply moved by your cordial reception and thankful for the time you have given us from your busy schedule. We thank our Heavenly Father for guiding us in this 1700th jubilee year of the declaration of Christianity as the state religion of Armenia to make our first pontifical visit to the Dioceses of the Armenian Church in the United States.

In all the Armenian Churches that rise from this blessed land and reach the skies -- those that I have visited as well as those that I shall visit -- I will always pray to God in the Highest. May He bless this mighty country, namely the United States of America, its President, and its hospitable and law-abiding people, whom I have come to know over the years, during my different visits to more than twenty states, including Texas.

On behalf of our people, who are dispersed all over the world, we once again congratulate you on the occasion of your election to the highest office of the Presidency.

I have come from Biblical Armenia, the land where Noah's Ark rested and thus became the second birthplace of mankind. The Armenian people, after a period of 70 years under Soviet rule, have today recovered their independence and are trying to reorganize their social life in accordance with the principles of democracy, free enterprise, human rights and freedom of conscience.

During the decades of atheism and dictatorship, the Armenian Apostolic Church was persecuted and suppressed ruthlessly. Thousands of clergymen were exiled, imprisoned and murdered. More than 700 monasteries and churches were destroyed and leveled to the ground. But our people's trust and faith in God did not vanish. Today, all the efforts are directed towards restoring what had been desecrated and ravaged. Let me say that it is not easy to heal the wounds that atheism aggressively


inflicted on the human soul and on our public life. God, however, is Almighty. I am optimistic and hopeful. I believe that with the help of the Good Lord the Armenian nation in the homeland, in Nagorno-Karabakh and in the Diaspora will be able to overcome the present difficulties and carry on the march of faith in Christ, following the example of their ancestors.

Our people always remember that at the beginning of the twentieth century, during the great Genocide of 1915, the United States was among the first to extend a helping hand to the massacred Armenians and to provide under its roof a haven for thousands of Armenian refugees. Their descendants are now the faithful and respected citizens of this country, who through their input in American life are expressing their fathers' and grandfathers' gratitude to America.

Mr. President, on this occasion I wish to express my people's gratitude to you and to the government and the people of the United States of America. You have, even in recent times, provided much assistance to Armenia, presently building a new and free life, so that she may overcome the consequences of the earthquake of 1988 and the economic hardships. The Armenians witnessed the philanthropic spirit of the American people as it was reflected in the tearful gaze of George Bush Junior, who was visiting Armenia right after the earthquake of 1988. Our people greatly appreciate particularly the peaceful efforts of the United States and other peace-loving nations to ensure the safety of the planet Earth, the home of mankind. We pray that the God-given inalienable right to live freely, justice and truth may also prevail in the endeavor to resolve the Mountainous Karabagh's conflict. May the greatly tormented and heroic Armenians of Karabagh find their peaceful life on their ancestral soil, in a brotherly good-will and in close cooperation with the neighboring peoples of the region.

From the 1700 years old luminous Altar of the Mother See of Holy Etchmiadzin, we ask for you the blessings of God in the Highest to help you in your important mission on behalf of a continuously peaceful, secure and prosperous life in the United States. Amen.

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՉՄԻԱԾԻՆ**



**SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN**

**Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝
ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀԻՆ ՈՒՂՂՅԱԼ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՎԵՇԻՆԳՏՈՆՈՒՄ**

**Մեծարգո Նախագահ
Խորապես զգացված են Ձեր թանկ ժամանակի տրամադրման և սիրալիկ
ընդունելության համար:**

Ես եկել եմ քիբլիական Հայաստանից, Նոյի տապանակիր երկրից, մարդկության երկրորդ ծննդավայրից: Մեր ժողովուրդը պատմության ընթացքին տեսել է բազում արհավիրքներ, վերապրել 1915 թ ցեղասպանություն և Խորհրդային Միության անաստվածության 70 տարիներ: Այսօր անկախություն նվաճած մեր ժողովրդի բոլոր ջանքերն ուղղված են վերականգնելու սրբապղծվածն ու ավերվածը: Խոստովանեմ. դյուրին չէ բուժել մարտնչող աթեիզմի վերքերը մարդկանց հոգիներում և հասարակական մեր կյանքում: Սակայն լավատես եմ, քանզի քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակը հոգեմորոգության և հավատի վերարթնության նոր ոգի ու շունչ է հաղորդել մեր ժողովրդին:

Մեծարգո Նախագահ, այս առիթով հոգու պարտք եմ նկատում երախտագիտությունս հայտնել Ձեզ, Ամերիկայի Կառավարությանն ու ժողովրդին այն բազմակողմանի աջակցությանց համար, որ Ամերիկան ցուցաբերել է իր նոր, ազատ կյանքը կառուցող Հայաստանին՝ երկրաշարժի հետևանքները, տնտեսական դժվարությունները հաղթահարելու նպատակով: Հուզումով եմ հիշում երկրաշարժի օրերին Հայաստան այցելած երիտասարդ ամերիկացու՝ Բուշ Կրտսերի արցունքոտ հայացքը, ուր հայությունը խտացված տեսավ Ամերիկյան ժողովրդի մարդասիրությունը: Մեր ժողովուրդը միշտ հիշում է, որ Ամերիկան անցյալ դարասկզբին առաջիններից մեկը ձեռք մեկնեց եղեռնահար հայությանը և իր հարկի մերքո ապաստան տվեց հազարավոր գաղթական հայերի, որոնց ժառանգներն այսօր վստահելի ու հարգարժան քաղաքացիներն են այս երկրի և իրենց ներդրումով փոխհատուցում են պապերի ու հայրերի երախտիքը Ամերիկային:

Մեր ժողովուրդը բարձր է գնահատում հատկապես Ամերիկայի խաղաղարար ջանքերը Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցում: Մենք աղոթում ենք, որ ազատ ապրելու Աստվածաշնորհի անօտարելի իրավունքը, արդարությունն ու ճշմարտությունը հաղթանակեն, և Ղարաբաղի բազմաչարչար ու հերոսական հայությունը գտնի իր խաղաղ կյանքը պապենական հողում՝ տարածաշրջանի հարևան ժողովուրդների հետ եղբայրական բարի կամեցողության ու անխաթար համագործակցության մեջ:

Ամենայն հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Լուսե խորանից Բարձրյալն Աստծո օրհնությունն ու զորակցությունն ենք հայցում Ձեզ Ձեր բարձր առաքելության մեջ՝ հանուն Ամերիկայի Միացյալ Նահանգների հարատև խաղաղ, ապահով ու բարգավաճ կյանքի: Ամեն: